Իջևան համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանի ուղերձը շրջանավարտներին

Սիրելի՛ շրջանավարտներ,

ջերմ բարեմաղթանքներով շնորհավորում եմ Ձեզ՝ դպրոցական վերջին դասն ազդարարող խորհրդանշական օրվա կապակցությամբ: Հուսով եմ, որ ուսումնառության տարիների ավարտը և հասուն կյանքի շեմ մուտք գործելու սկիզբն ազդարարող «Վերջին զանգի» խորհրդավոր ղողանջները մշտապես վառ կմնան Ձեր բոլորի հիշողության մեջ:

Շնորհավորում եմ նաև Ձեզ, հարգարժա՛ն մանկավարժներ, քանզի «Վերջին զանգը» ոչ միայն տոնական միջոցառում է, այլև մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում Ձեր անմնացորդ նվիրումը և անխոնջ վաստակը յուրովի իմաստավորող գնահատականն ու առհավատչյան:

Թանկագի՛ն շրջանավարտներ,

տոնական այս օրվա շրջանակներում ևս պետք է վստահաբար փաստենք, որ Հայաստանի Հանրապետության ապագան հուսալի ձեռքերում է, քանզի ի դեմս Ձեզ մենք ունենք քաղաքացիական բարձր գիտակցությամբ, վեհ ու վսեմ գաղափարներով օժտված արժանապատիվ ու անվեհեր սերունդ:

Համոզված եմ, որ Դուք հետայսու ևս կդավանեք բարու, գեղեցիկի, ճշմարտության և ազգային միաբանության սրբազան արժեքներին ու Ձեր կայուն գիտելիքներով, անսպառ եռանդով, նպատակասլացությամբ ու ողջ ներուժով կզորակցեք մեր մայր հայրենիքի հզորացմանը, բարօրությանը և նրա զարգացմանը:

Մեկ անգամ ևս շնորհավորում եմ Ձեզ և մաղթում բարի երթ: Թո՛ղ իրականություն դառնան ձեր բոլոր իղձերն ու նվիրական երազանքները:

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ